# ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## № ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/3-17-4/4

ք. Երևան «28» փետրվարի 2017թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՕՎՆԵ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Բաղդասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 (երեք) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1731600 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 20-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե պայմանագրի կատարման համար համապատասխան իրավական ակտով ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | «ՕՎՆԵ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | ք. Երևան, Աթոյան անց. 17շ. բն. 15 |
| Կառավարական տուն 3 | «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 1660001401440100 |
| Հ/Հ 900011001287 | ՀՎՀՀ 00428675 |
| Հ/Հ 900011001295 | |
| ՎՀՀ 02578338 | |
| Աշխատակազմի ղեկավար | ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Ա. Բաղդասարյան | Ա. Բաղդասարյան |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված 1*
*«28» փետրվարի 2017թ. կնքված*
*№ ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/3-17-4/4 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| NN | SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների | |
|---|---|---|---|
| | | **1 չափաբաժին** | |
| | | 8 հատ 5 տեղ առջևի տանող ա/մ | 1 հատ 4x4 տիպի ավտոմեքենա |
| 1 | 2 | 3 | 4 |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | **Այլ պետությունների արտադրության մեքենաներ** | |
| 1 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 2 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 3 | Շարժիչի վերականգնում | 10000 | 10000 |
| 4 | Շարժիչի մասնակի նորոգում | 30000 | 5000 |
| 5 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 8000 | 8000 |
| 6 | Նույնը DOHC դեպքում | 0 | 0 |
| 7 | Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում | 30000 | 3000 |
| 8 | Բաշխիչ լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 15000 | 5000 |
| 9 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխում | 15000 | 0 |
| | **2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 10 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 0 | 0 |
| 11 | Յուղի պոմպի փոխարինում | 3000 | 3000 |
| 12 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 4000 | 2000 |
| 13 | Բռնկման կարգավորում | 0 | 0 |
| 14 | Խարնարակի հանում և տեղադրում | 3000 | 2000 |
| 15 | Խարնարակի վերանորոգում | 0 | 0 |
| 16 | Օդի զտիչի փոխարինում | 1000 | 1000 |
| 17 | Սրահի օդի զտիչի փոխում | 2000 | 2000 |
| 18 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 1000 | 1000 |
| 19 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 20000 | 30000 |
| 20 | Բենզամղիչի փոխարինում | 15000 | 15000 |
| 21 | Վառելիքի զտիչի փոխարինում | 10000 | 15000 |
| 22 | Դրոսելային փականի լվացում և կարգավորում | 8000 | 8000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | |
| 23 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 4000 | 5000 |
| 24 | Հովհարի հանում և տեղադրում | 7000 | 6000 |
| 25 | Ռադիատորի հանում և տեղադրում կոնդիցիոների դեպքում | 15000 | 2000 |
| 26 | Ռադիատորի վերանորոգում | 0 | 0 |
| 27 | Թերմոստատի փոխարինում | 10000 | 10000 |
| 28 | Ջրի պոմպի փոխարինում | 15000 | 25000 |
| 29 | Ջրի պոմպի վերանորոգում | 0 | 0 |
| 30 | Ընդարձակող բաքի փոխարինում | 3000 | 1000 |
| 31 | Խլարարի հանում և տեղադրում | 15000 | 1000 |
| 32 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 3000 | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | |
| 33 | Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում | 10000 | 0 |
| 34 | Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում | 0 | 0 |
| 35 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 35000 | 0 |
| 36 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 37 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում | 5000 | 0 |
| 38 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 35000 | 0 |
| 39 | ՓՏ-ի վերանորոգում | 20000 | 0 |
| 40 | ՓՏ-ի առանցքակալի փփոխարինում | 1000 | 0 |
| 41 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 42 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 1000 | 1000 |
| 43 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում | 1000 | 1000 |
| 44 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 13000 | 13000 |
| | **5. Կախոց** | | |
| 45 | Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | 0 | 0 |
| 46 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 8000 | 10000 |
| 47 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10000 | 10000 |
| 48 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 12000 | 10000 |
| 49 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում | 5000 | 1000 |
| 50 | Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում | 5000 | 1000 |
| 51 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 2000 | 1000 |
| 52 | Զսպանակի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 53 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 8000 | 10000 |
| 54 | Ներքևի լծակի վռանների տեղադրում | 0 | 0 |
| 55 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 30000 | 25000 |
| 56 | Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում | 4000 | 4000 |
| 57 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 58 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 59 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 60 | Վերևի լծակի վռանի փոխարինում | 0 | 10000 |
| 61 | Գնդե հոդակապի փոխարինում | 8000 | 10000 |
| 62 | Ծայրականի հանում և տեղադրում | 4000 | 4000 |
| 63 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 1000 | 1000 |
| 64 | Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում | 2000 | 0 |
| 65 | Առջևի կայունարարի վռանի փոխարինում | 4000 | 4000 |
| 66 | Առջևի կայունարարի առջևի վռանի փոխարինում | 0 | 4000 |
| 67 | Հետևի զսպանակի փոխարինում | 1000 | 0 |
| 68 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 8000 | 10000 |
| 69 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | 4000 | 0 |
| 70 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 4000 | 4000 |
| 71 | Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում | 2000 | 0 |
| 72 | Հետևի կայունարարի վռանի փոխարինում | 4000 | 4000 |
| 73 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 0 | 3000 |
| 74 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 0 | 4000 |
| 75 | Անվաբացքի կարգավորում | 14000 | 12000 |
| 76 | Ընթացամասի յուղում | 0 | 3000 |
| | **6.Ղեկային մեխանիզմ** | | |
| 77 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 30000 | 25000 |
| 78 | Ղեկային կալունի վերանորոգում | 50000 | 5000 |

| | | | |
|---|---|---|---|
| 79 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանի փոխարինում | 1000 | 1000 |
| 80 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում | 5000 | 0 |
| 81 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | 8000 | 3000 |
| 82 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում | 3000 | 3000 |
| 83 | Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 84 | Նույն կոդիցիոների դեպքում | 10000 | 0 |
| 85 | ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 86 | ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում | 7000 | 1000 |
| | **7. Արգելակային համակարգ** | | |
| 87 | Գլխ.գլանի հանում և տեղադրում | 15000 | 0 |
| 88 | Գլխ. գլանի վերանորոգում | 0 | 0 |
| 89 | Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում | 15000 | 0 |
| 90 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 91 | Բանվ. գլանի վերանորոգում | 0 | 0 |
| 92 | Արգելակային համակարգի օդահանում | 0 | 0 |
| 93 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 2000 | 0 |
| 94 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | 2000 | 0 |
| 95 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 0 | 0 |
| 96 | Հետևի  սուպպորտի վերանորոգում | 0 | 0 |
| 97 | Արգելակային փոխրակի փոխարինում | 3000 | 3000 |
| 98 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 3000 | 4000 |
| 99 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 3000 | 4000 |
| 100 | Հետևի կոճղակների փոխարինում | 6000 | 10000 |
| 101 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 5000 | 5000 |
| 102 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 5000 | 5000 |
| 103 | Առջևի արգելակային սկավառակիհողկում | 6500 | 6500 |
| 104 | Հետևի արգելակային սկավառակիհողկում | 6500 | 6500 |
| 105 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 106 | ABS-ի հանում և տեղադրում | 0 | 0 |
| 107 | ABS-ի վերանորոգում | 4000 | 5000 |
| 108 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 6000 | 6000 |
| 109 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 1000 | 1000 |
| | **8.Էլեկտրասարքավորում** | | |
| 110 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| 111 | Գեներատորի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| 112 | Գեներատորի վերանորոգում | 35000 | 35000 |
| 113 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 10000 | 50000 |
| 114 | Մեկնարկիչի վերանորոգում | 10000 | 15000 |
| 115 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 15000 | 15000 |
| 116 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 117 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| 118 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | 60000 | 100000 |
| 119 | Հեռակառավարման համակարգի տեղադրում | 25000 | 20000 |
| 120 | Կողային ապակու բարձրացման մեխանիզմի փոխարինում | 15000 | 15000 |
| 121 | Կողային ապակու բարձրացման մեխանիզմի նորոգում | 15000 | 15000 |
| 122 | Կողային հայելիների նորոգում | 15000 | 15000 |
| 123 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | 8000 | 8000 |
| 124 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| 125 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 4000 | 6000 |
| 126 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 10000 | 10000 |

| | | | |
|---|---|---|---|
| 127 | Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում | 15000 | 18000 |
| 128 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում | 10000 | 12000 |
| 129 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 8000 | 8000 |
| 130 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 8000 | 8000 |
| 131 | Վառոցքի մոմերի փոխարինում | 4000 | 8000 |
| 132 | Կոնդիցիոների լիցքավորում | 10000 | 10000 |
| 133 | Կոնդիցիոների վերանորոգում | 15000 | 15000 |
| | **9. Այլ ծառայություններ** | | |
| 134 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար | 7000 | 7000 |
| 135 | Անիվի հանում և տեղադրում | 600 | 600 |
| 136 | Անիվի բալանսավորում | 1500 | 1500 |
| 137 | Քարշակի ծառայություն գին 1կմ, համար | 700 | 700 |
| 138 | Նստատեղի նորոգում | 12000 | 12000 |
| 139 | Դիմապակու փոխում | 25000 | 25000 |
| 140 | Մեքենայի լվացում | 2500 | 4000 |
| 141 | Մեքենայի սրահի քիմիական մաքրում | 35000 | 55000 |
| 142 | Մեքենայի շարժիչի լվացում և փայլեցում | 7000 | 10000 |
| | **ՏՍ 2 ոլորտացում օգտագործվող կոնկրետ մասերի, բաղադրիչների և այլ օժանդակ նյութերի գնացանկում** | | |
| | **1. Շարժիչ** | | |
| 1 | Բարձիկ | 93000 | 95000 |
| 2 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 34000 | 59000 |
| 3 | Շարժիչի գլխիկի միջադիր | 25000 | 28000 |
| 4 | Մխոց | 42000 | 8000 |
| 5 | Ատամնավոր փոկ | 20000 | 0 |
| 6 | Ատամնավոր փոկին ձգող մեխանիզմ | 22000 | 0 |
| 7 | Շղթա | 22000 | 17000 |
| 8 | Միջադիր | 10000 | 10000 |
| 9 | Պարազիտային փոկանիվ | 21000 | 24000 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 10 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր | 3700 | 3700 |
| 11 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր | 5000 | 5000 |
| 12 | Յուղի զտիչ | 6000 | 9000 |
| 13 | Յուղի պոմպ | 45000 | 14000 |
| 14 | Յուղի պոմպի շարժաբեր | 0 | 0 |
| 15 | Վառոցքի մոմ | 8000 | 8500 |
| 16 | Ինժեկտորի ֆորսունկա | 21000 | 15000 |
| 17 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 185000 | 136000 |
| 18 | Վառելանյութի զտիչ | 32000 | 21000 |
| 19 | Աքսելերատորի ճոպան | 24000 | 0 |
| 20 | Օդի զտիչ | 9000 | 10000 |
| 21 | Սրահի օդի զտիչ | 12000 | 12000 |
| 22 | Յուղի տվիչ | 14000 | 16000 |
| 23 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 53000 | 56000 |
| 24 | Օդի ծախսի տվիչ | 55000 | 50000 |
| 25 | Թթվածնի տվիչ | 36000 | 28000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | |
| 26 | Ռադիատոր | 171000 | 138000 |
| 27 | Ընդարձակող բաք | 33000 | 35000 |

| | | | |
|---|---|---|---|
| 28 | Ռադիատորի փողրակ | 16000 | 18000 |
| 29 | Թերմոստատ | 15000 | 23000 |
| 30 | Ջրի պոմպի թևակ | 0 | 0 |
| 31 | Ջրի պոմպ | 45000 | 91000 |
| 32 | Ջրի պոմպի առանցքակալ | 0 | 0 |
| 33 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 3000 | 3000 |
| 34 | Ջրի պոմպի սոնանիվ | 0 | 0 |
| 35 | Հոլովակ | 0 | 0 |
| 36 | Փոկ | 26000 | 56000 |
| 37 | Փոկ կոնդիցիոների | 0 | 0 |
| 38 | Կրոնշտեյն | 12000 | 15000 |
| 39 | Անուր (Խամուտ) | 500 | 1000 |
| 40 | Վառարանի ռադիատոր | 65000 | 68000 |
| | **4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | |
| 41 | Փոխանցման տուփ | 200000 | 65000 |
| 42 | ՓՏ-ի առջևի խցուկ | 6000 | 0 |
| 43 | ՓՏ-ի հետևի խցուկ | 7000 | 0 |
| 44 | ՓՏ-ի առանցքակալ | 11000 | 0 |
| 45 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 0 | 0 |
| 46 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | 0 | 0 |
| 47 | ՓՏ-ի եղանիկ | 1000 | 0 |
| 48 | ՓՏ-ի ատամնանիվ | 1000 | 0 |
| 49 | Համաժամիչ | 3000 | 0 |
| 50 | Մուֆտ | 0 | 0 |
| 51 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 54000 | 0 |
| 52 | ԱՓՏ-ի զտիչ | 29000 | 34000 |
| 53 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | 114000 | 40000 |
| 54 | ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 55000 | 18000 |
| 55 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | 6000 | 6000 |
| 56 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 7000 | 7000 |
| 57 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 0 | 0 |
| 58 | Հերմետիկ | 3000 | 3000 |
| | **5. Կախոց** | | |
| 59 | Կրոնշտեյն | 11000 | 13000 |
| 60 | Ձախ կամ աջ հոդակապ | 149000 | 200000 |
| 61 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 27000 | 30000 |
| 62 | Անվակունդ | 63000 | 65000 |
| 63 | Անվակուդի խցուկ | 0 | 0 |
| 64 | Անվակունդի ներքին առանցքակալ | 24000 | 55000 |
| 65 | Անվակուդի արտաքին առանցքակալ | 0 | 7000 |
| 66 | Հետևի անվակունդի ներքին առանցքակալ | 32000 | 39000 |
| 67 | Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ | 0 | 14000 |
| 68 | Ձախ կամ աջ հեդակապի խցուկ | 5000 | 6000 |
| 69 | Հարվածամեղմիչի թասակ | 55000 | 37000 |
| 70 | Զսպանակ | 25600 | 11000 |
| 71 | Առջևի հարվածամեղմիչ | 79000 | 105500 |
| 72 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 11000 | 0 |
| 73 | Հարվածամեղմիչի վռան | 0 | 13000 |
| 74 | Ներքևի լծակ | 71000 | 20000 |
| 75 | Ներքևի լծակի վռան | 8000 | 31000 |

| | | | |
|---|---|---|---|
| 76 | Վերևի լծակ | 0 | 52000 |
| 77 | Վերևի լծակի վռան | 0 | 16000 |
| 78 | Գնդե հոդակապ | 23000 | 25000 |
| 79 | Առջևի կայունարար | 10000 | 11000 |
| 80 | Առջևի կայունարարի վռան | 5000 | 8000 |
| 81 | Առջևի կայունարարի առջևի վռան | 0 | 6000 |
| 82 | Հետևի զսպանակ | 24000 | 0 |
| 83 | Հետևի ցնցամեղմիչ | 74000 | 161000 |
| 84 | Հետևի մետաղաձող (շտանգա) | 52000 | 81000 |
| 85 | Հետևի մետաղաձող (շտանգա) վռան | 5000 | 8000 |
| 86 | Հետևի անկյունագծային լծակ | 35000 | 82000 |
| 87 | Անկյունագծային լծակի վռան | 11000 | 7000 |
| 88 | Կայունարարի կանգնակ առջևի | 11000 | 22000 |
| 89 | Կայունարարի կանգնակ հետևի | 12000 | 39000 |
| | **6. Ղեկային մեխանիզմ** | | |
| 90 | Ղեկային կալուն | 45000 | 46000 |
| 91 | Ղեկային կալունի առանցքակալ | 0 | 0 |
| 92 | Ղեկային կալունի խաչուկ | 0 | 0 |
| 93 | Հիդրոուժեղարար | 0 | 0 |
| 94 | Հիդրոուժեղարարի փոկ | 0 | 0 |
| 95 | Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 |
| 96 | Հիդրոուժեղարարի պոմպ | 46000 | 31000 |
| 97 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 |
| 98 | Ղեկային ձող | 15000 | 18000 |
| 99 | Ղեկային ձողի ծայրակալ | 13000 | 19000 |
| 100 | Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր | 6000 | 6000 |
| 101 | Ճոճանակ | 0 | 0 |
| 102 | Ճոճանակի վռան | 0 | 0 |
| | **7.Արգելակային համակարգ** | | |
| 103 | Գլխ. գլան | 27000 | 12000 |
| 104 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 |
| 105 | Վակումային ուժեղարար | 12000 | 14000 |
| 106 | Բանվ. գլան | 11000 | 0 |
| 107 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 0 | 0 |
| 108 | Արգելակային փոխրակ | 23000 | 19000 |
| 109 | Սուպորտի ուղղորդիչ | 5000 | 6000 |
| 110 | Սուպորտի մոնժետ | 2500 | 2000 |
| 111 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 35000 | 48000 |
| 112 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 25000 | 33000 |
| 113 | հետևի թմբուկայն կոճղակների կոմպլեկտ | 26000 | 0 |
| 114 | Առջևի արգելակային սկավառակ | 64000 | 112000 |
| 115 | Հետևի արգելակային սկավառակ | 49000 | 105000 |
| 116 | Ձեռքի արգելակային ճոպան | 36000 | 48000 |
| 117 | Ձեռքի արգելակային կոճղակ | 21000 | 28000 |
| 118 | ABS-ի տվիչ | 37000 | 38500 |
| 119 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 4800 | 4800 |
| 120 | Ձեռքի արգելակային ճոպան | 0 | 0 |
| | **8. Էլեկտրասարքավորում** | | |
| 121 | Գեներատոր | 66000 | 24000 |
| 122 | Գեներատորի դիոդային կամրջակ | 0 | 0 |

| | | | |
|---|---|---|---|
| 123 | Գեներատորի ռելե | 0 | 0 |
| 124 | Գեներատորի առանցքակալ | 15000 | 23000 |
| 125 | Ստարտեր | 68000 | 41000 |
| 126 | Ստարերի ռելե | 23000 | 15000 |
| 127 | Ստարտերի ածուխ | 7500 | 5000 |
| 128 | Բենդեքս | 6000 | 16000 |
| 129 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 45000 | 6000 |
| 130 | Առջևի լապտեր | 86000 | 564000 |
| 131 | Առջևի թարթիչ | 35000 | 0 |
| 132 | Հետևի լապտեր | 41000 | 235000 |
| 133 | Հետևի թարթիչ | 0 | 0 |
| 134 | Արգելակային լապտեր | 0 | 0 |
| 135 | Լամպ | 4000 | 5000 |
| 136 | Էլեկտրական անջատիչ | 9000 | 10000 |
| 137 | Էլեկտրական տվիչ | 10000 | 11000 |
| 138 | Ապակելվացիչ | 9000 | 11000 |
| 139 | Էլեկտրական չափիչ սարք | 11000 | 10000 |
| 140 | Բռնկման կոդպեք | 5000 | 9000 |
| 141 | Դիմապակի | 256000 | 264000 |
| 142 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 11000 | 13000 |
| 143 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 10000 | 12000 |
| 144 | Վառոցքային լարերի խուրց | 26000 | 0 |
| 145 | Էլեկտրաամբարձիչ | 29000 | 0 |
| 146 | Վառոցքի մոմի ծայրակալ | 43000 | 58000 |
| 147 | Ապակելվացիչի շարժիչ | 6000 | 26000 |
| 148 | Դռների կենտրոնական փական | 39000 | 15000 |
| 149 | Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար | 3500 | 3500 |
| ***Ընդամենը**** | | | |

| ***Ծառայության մատուցման ժամկետները*** | |
|---|---|
| ***Սկիզբը*** | ***Ավարտը*** |
| Պայմանագրի կնքման պահից | 20.12.2017թ. |

Պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001287
Հ/Հ 900011001295
ՀՎՀՀ 02578338

**Աշխատակազմի ղեկավար**

_________ Մ. Բաղդասարյան

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ՕՎՆԵ» ՍՊԸ
ք. Երևան, Աթոյան անց. 17$_2$. բն. 15
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ
Հ/Հ 1660001401440100
ՀՎՀՀ 00428675

**ՍՊԸ-ի տնօրեն՝**

_________ Ա. Բաղդասարյան

Կ.Տ

***Հավելված 2***
*«28» փետրվարի 2017թ. կնքված*
*№ ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/3-17-4/4 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(հազար դրամ)

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը Տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | | | 2-րդ եռամսյակ | | | 3-րդ եռամսյակ | | | 4-րդ եռամսյակ | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| **01.01.01.04** (900011001287) | | | | | | | | | | | | | | |
| 1. | Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն | | | 100.0 | 257.0 | 257.0 | 257.0 | 440.0 | 440.0 | 440.0 | 731.6 | 731.6 | 731.6 | **731.6** |
| **01.01.01.05** (900011001295) | | | | | | | | | | | | | | |
| 1. | Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն | | | 100.0 | 350.0 | 350.0 | 350.0 | 600.0 | 600.0 | 600.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 | **1000.0** |
| ***Ընդամենը՝*** | | | | ***200.0*** | ***607.0*** | ***607.0*** | ***607.0*** | ***1040.0*** | ***1040.0*** | ***1040.0*** | ***1731.6*** | ***1731.6*** | ***1731.6*** | ***1731.6*** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: Վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա, բայց ոչ ավել քան տվյալ ամսվա համար նախատեսված գումարից:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 90001001287
ՀՎՀ 90001001295
ՀՎՀՀ 02578338

**Աշխատակազմի ղեկավար՝**
Կ. Գարդասյան
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՕՎՆԵ» ՍՊԸ
ք. Երևան, Աթոյան անց. 17$_2$. բն. 15
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ
ՀՎ 1660001401440100
ՀՎՀՀ 00428675

**ՍՊԸ-ի տնօրեն՝**
Ա. Բաղդասարյան
Կ.Տ

***Հավելված 3***
*«28» փետրվարի 2017թ. կնքված*
*№ ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/3-17-4/4 ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«28» փետրվարի 2017թ. կնքված*
*№ ՀՀ-ՏԿԶՆ-ՇՀԾՁԲ-15/3-17-4/4 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ստորագրություն | ստորագրություն |